

որ այս վարդապետութեան հիմնադրըն, որ մեր գլխուն վերեւ միլիօնաւոր գունտերուն առանց խանգարելու, կանոնաւոր շրջաններ կը տայ, սիւսած է իւր հեղինակութեան մէջ այն ստորիճան ներգաշնակութիւն. պէտք է զարմանալ որ Նա իւր խոր հրդեղ հրապոյրներն եւ բարձրութիւնը սքանչելի շրջանի մը մէջ շարագասած է. այն ճարտարութեամբ, որով կարգած և կանոնաւորած է աստղներու շրջանն ընծայել մեզ երբեմն ծաղկալից և երբեմն փոթորկալից եղանակներ: Եւ ի՞նչ է այս դարուց կատարութիւնն ընդդէմ Քրիստոնէութեան: Եթէ իրաւացի է կրօնքի մը կարեւորութիւնը մարդոյն, ինչպէս ընդունած են բոլոր փիլիսոփայք, որ մի կրօնքի հետ կարելի է փոխել մեր նախնեաց սոյն դաւանութիւնն: Թո՛ղ մտաբերեն այն օրերը, յորս արենախոնձ մարդիկ ջանացին առաքինութեանց դիցուհիներ կանգնել Քրիստոնէութեան աւերակաց վրայ: Այս օրերուն մէջն էր որ մարդիկ մի ձեռքով գլխատութեան բեմեր կը կանգնէին եւ միւսովն մեր տաճարներու ճակտին վրայ Աստուծոյ համար Յա-ի փեռականութիւն և մարդկան համար մահ կը նշանագրէին. և նոյն իսկ այս տաճարներն, յորս երբեմն կը պաշտուէր աշխարհաճանօթ ճշմարիտ Աստուածն, կը յարգուէր Ս. Կուսի պատկերն, որք անբաղձներու և տառապեալներու միտթարիչ կը հանգիստանային, այս տաճարներն նուիրուած էին ճշմարտութեան դիցուհւոյն, զոր ո՛չ ոք չէր ճանաչէր և իրաւանց դիցուհւոյն, որ ո՛չ ոքի արտասուքը չէր սրբեր:

Թարգ. — 'ի Գաղղիէիէնէ
Գ. Ս. Իմայեղի:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Պ Ի Ի Ֆ Ո Ն Ի (1)

Մեծ մարդկանց նկարագիրն պատմող ամենագոյն յիշատակներն իսկ մեծապէս կը հրապուրեն զմեզ: Գոգցես այս ընտիր արարածները զերեք շրջապատողներուն նոր զօրութիւն մի կը հաղորդեն և իրենց մերձեցողներուն անմահութեան կնիքը կը գործեն: Ուստի՛ յառաջ կը գայ նոցա թանկագին ձեռագիրները, իրենց մտածութեանց հաւատարիմ բարեկամները խուզարկելու, նոցա բնականութեանց այցելելու և նոցա գործածած շնչին իրեն իսկ քստանալու անզուսպ եռանդը. և թէ ոչ մեր տածած այն զգացումն, թէ փառքը մահէն յետոյ եւս անեղծ կը մնայ և իւր դադարները յաջորդ սերնդին մէջ կ'ապրին: Այս զգացումն է նաեւ, որ քաջալեր կը հանգիստանայ հոյակապ մարդկանց կենսագրութիւնն ընկել չճանձրածալ երբեք և նոցա վերայ անհամար ստոյգ մանրամասնութիւններ աւելցնել, որպէս զի միշտ անյոգ հետաքրքրութեամբ կարգացուին:

Ահա մեք եւս այսու զգացմամբ պիտի ջանաք բոտ մերոյսան Պիւֆոնի կենոց պատմութիւնն պատկերացնել աստ, այն մեծ մարդուն, որ իւր բովանդակ անձը բնութեան ուսման նուիրեց և որ միշտ մեր զարմացման առարկան և բուռն բերկրութեան աղբիւրն պիտի լինի:

Գէորգ — Ըւի Լէկլերկ, Պիւֆոնի կոմսը, 1707 Սեպտեմբեր 7ին ծնաւ 'ի Մոնդպար (Գոգ-տօր) (2), 'ի Բենիամին — Յրանսուա Լէկլերկ տը Ֆիւֆոնէ, որ թագաւորի խորհրդական էր և և Մոնդպարի աղային ատենի նախագահ և որ յետ ժամանակաց Տիժանի աւագաժողովն ատենակալ եղաւ:

Լէկլերկ ընտանիքը, որ 'ի սկզբան Նիվերնէի մէջ կը բնակէր, խիստ հին է. նա ժեշ գտորուն Պուրկոննի մէջ հաստատուեցաւ. ժեշ գտորուն իւր սերունդներէն մին, Շարլը Լէկլերկ, որ Կրիշեօնի պարոնութեան դատաւորն էր, եկաւ 'ի Մոնդպար բնակեցաւ: Իւր թոռն, Բենիամին — Յրանսուա Լէկլերկ, մեծ բնապատումին հայրը, երկիցս ամուսնացաւ: Առաջին ամուսնութենէն հինգ զաւակ ունեցաւ, երեքը իրենց անձը կ'է-

(1) Պիւֆոնի ինսագրութեան ասելի պարտութեան հետ իրաւ համար արձան դադարէն պէտք է լաւ պահելու ծանօթութիւններ ասելիքն է: Ե. Թ.

(2) Գոգ-տօր, Յրանսուա ինքնապէս նահանգնէին մէկ է և նախկին Պոսթիւնի հիւսիսային հատ ին խաղէ. գլխաւոր քաղաքն է Տիժան, որ Պոսթիւնի շրանցին վերայ շինուած է և 25000 բնակչ ունի: Այս նահանգին մէջ է Դոմ-Մոնդպար քաղաքը, որ 2100 բնակչ ունի:

դեցականութեան նուիրեցին : չորրորդը կոչս մնաց
և հինգերորդը : այն է Գեորգ—Լուի : Պիւֆոնի
կոմս եղաւ : Իսկ երկրորդ ամուսնութենէն երկու
զաւակ ունեցաւ :

Պիւֆոն իւր առաջին դաստիարակութիւնը
մօրմէն ստացաւ : որ բարձր իմացականութեան և
հաստատուն բնաւորութեան տէր կին մ' էր : Ա.
պա Տիֆոնի վարժարանը դրուեցաւ : ուր իւր ըն-
դաբոյս յատկութիւններով և ուսողութեան մա-
սին ունեցած մեծ ընդունակութեամբ սուղ ժա-
մանակէն նշանաւոր եղաւ : Լըսուի թէ միշտ Եւ-
կլիդէսի (1) գործերը իւր հետ կը կրէր և իւր ա-
շակերտակիցներէն կը հեռանար : առանձնութեան
մէջ իւր խորհրդածութիւններով և հաշիւներով
զբաղելու համար : Երբ օր մը վարժարանի տնօրէնը
Պիւֆոնի հօր բարեկամ՝ Պրոսպի նախագահին
տրտունջ կը յայտնէր իւր աշակերտի հասակէն վեր
ուսմանց մասին ունեցած հակամիտութեանց հա-
մար : նախագահը սոյն մարդարեական պատասխանը
տուաւ Տնօրէնին : « Այսպիսի դպիշ : Եւ զայս
յոյժանայ ք » :

Պիւֆոն իւր ուսումներն աւարտելէն ղկնի Մոնթ-
պար վերադարձաւ : Հայրը իւր որդւոյն համար
գատաւորական աթոռ մը կ'երազէր : բայց երիտա-
սարգ Պիւֆոնի կուշմն այդ չէր : Ուստի բուռն
գորութեամբ իւր հօր կամաց ընդդիմացաւ : Նա
իւր Ժան Նատող քեռւոյն մտերմացաւ : որ գի-
տութիւնները կը մշակէր և իւր անդամադրելի մի-
տումը կը քաջաւերէր : Շատ անգամ հօրմէն զաղո-
նի Նատողի գործարանը կերկնար եւ նորա հետ
փորձերու կը պարագայէր : որոնք իւր հանձարը կը
զարգացնէին :

Օր մը Պիւֆոնի հայրը նոցա փորձ ըրած ժամա-
նակ յանկարծ վերայ հասնելով՝ ցտամմա իւր ա-
նեւծագին ըսաւ . « Գուռ մեր ընտանիքէն նախա-
դահ մի կը բառնաս :—Ես թերեւ Ֆրանսիոյ ա-
ւելի մեծ փառք մի սիրտի տամ : պատասխանեց
Նատողք » :

Արդարեւ երիտասարդ Պիւֆոնի այնչափ նշա-
նաւոր ճաշակներն ծանաչելը և զանոնք զարգացնելը՝
հասարակաց շնորհակալութեան շնչին պատճառ մը
չէ : Այս ծննդական հանձարի առաջին քայլերը
առաջնորդած լինիլը՝ Ժան Նատողի համար յա-
ւիտենական պատիւ մը սիրտի լինի :

Կենաց ընթացքին մէջ քանի՛ քանի անգամ
պարագաները մարդկային նախատեսութիւններն 'ի
դերեւ և կը հանեն : Պիւֆոն դատաւոր սիրտի լինելը
մեծ բնապատում մի եղաւ : Նա Տիֆոնի մէջ
զխորւածով երկտասարդ Գեոգրոնի և նորա դաս-
տիարակին ծանօթացաւ : որ գիտնական և հմուտ
անձ մի էր : Սոցա յարեցաւ : 'ի Փարիզ և 'ի Սո-

միւս (1) այս օտարականաց հետեւեցաւ : և ապա
Մենկիւս և Երտալիս սոցա ուղեկցեցաւ : Ի
Լոնտոն այնուպէսական սովորութիւնները Պիւ-
ֆոնի այն ազնիւ կերպարանքը : այն հանդերձից
ճիշտութիւնն ու ընդունի փափկութիւնը տալին :
որով Հիւսմ (2) զայն տեսած ժամանակ ըսաւ թէ՝
նա աւելի Ֆրանսիոյ սպարապետի մը (marechal)
կը նմանի քան թէ գրագիտի :

Պիւֆոն Երտալիս մէջ իւրաքանչիւր քայլափո-
խին այնպիսի հրաշուրիչ գիրքեր կը գտնէր : որք
իւր մեծ հոգւոյն մէջ առ բնութիւնն ունեցած սերն
կը հրահրէին : Լոնդոնիոյ Հուսթի գաշտերը, Նա-
բոլի թագաւորութեան հրաքղտային երկիրները
յաջորդաբար զուարթ : փառահեղ եւ ահագնեցիկ
տեսիլներ կը սրբաւորէին իւր աչաց : Նա արար-
չապետի ձեռակերտաց առջեւ : մարդկային ձեռա-
կերտները կը մոռանար : Պատկերները : արձանները
և յիշակերտները : որք մեծ Ժողովրդեան մը պատ-
մութիւնը կը ներկայացնէն : հազիւ ուրեմն նորա
հոգւոյն կաղզէին : որ իւր տեսութեան առջեւ պար-
զուած բնութեան տեսարաններով լիովին գրա-
ւուած էր :

Պիւֆոն իւր ճանապարհորդութիւններէն վե-
րադառնալով՝ պարտաւորեցաւ կենաց դժուարու-
թեանց հետ մարտնչել : առաքարիկ մը անստուգու-
թիւնը և գրամական նեղութիւններ հարկադրեցին
զայն առ վայր մի իւր ուսումն յետաձգել :

Իւր հօրը հարստութիւնը վտանգի մէջ էր :
Պիւֆոնի երկիրը : նորա՝ պահանջատեարց միակ գը-
րաւը : աշուրդի գրուած էր : Պիւֆոն իւր օրի-
նական հասակն ստանալով՝ ինամակալութիւնն ըս-
տանձնեց : այս կերպով իւր հայրենի ստացուածքը
իրկեց և կարող եղաւ վերագնել այն երկիրը : ուր
իւր ծերունի հայրը տակաւին ընդերկար ապրեցաւ :
իւր որդւոյն յաղթութեամբն երջանկացած :

Պիւֆոն իւր հարստութեան տիրանալով՝ գըւ-
խովին ուսման նուիրեց իւր անձը : Նորա ուսումն
նախնական ճաշակները բնաւ մարած չէին : նա ըս-
կրտաւ ուսողութիւնը : տարբարանութիւնը և տնկա-
յին քնադատութիւնը մշակել : Անկլական ընդուն
կատարեւադործել և ընդ նոսին Ֆրանսերէն գրելու
կրթութիւններ ընել՝ թարգմանութիւններ ընելով :
Իւր առաջին գրութիւնները նշանաւոր եղան :
նոցա մէջ մեծ մտքի մը փորձերը տեսնուեցան : նը-
շանաւոր եղան նոյնպէս իւր առաջին գիտնական աշ-
խատութիւնները : որք իւր առջեւ գիտութեան

(1) Սոմերս, Մէն և Լոստոն շրջանային գլխաւոր հա-
ղաւի է : Լոստոն Ժողի եւ լուին լեւոյն շրջան : 12000
բնակիչ ունի : Այս քաղաքին դիրքը խիստ գեղեցիկ է : եր-
կուս խմբով ունի : յորոյ մէջ 12 խմբով լեւոյն բարձրա-
յաժ է 260) Վեդը երկրորդութիւն ունի :

(2) Գլաուիլ Էթմ, պարսկական և իսլամական Սէլ-Էթա-
նի : 1711 ին Երթմալիքի մէջ ծնաւ : և 1716 ին Վեդա :
Սա Ժողի դարձաւ իսլամականութեան Եթալիսի հետեւող ե-
ղաւ : Իւր Անկլիոյ պարսկական դատաւորն էլ լիւծ է :

(1) Եւկլիդէս : Կլասիկ Եթիկ երկրաչափ Ժ' է : պր
Ա. Պարալլելոն օրով ծաւալեցաւ : (500 Վ. Մ.) :

Աղագեթի տղայի գոնեղը բոցին : Նա իւր քսանընկճ՝ ամենայ հասակին մէջ ամենապիկից եղաւ պատկառելի Գնդակներէն (1) : որ նորա հանձնարը նախա տեսած էր :

Պիւֆան Աղագեթի ամենեւնի մինչև 1750 թըւականը անգագայ աշխատեցաւ : Այն հասակին մէջն էր նա : ուր մեծ գաղափարները կը պրտադարձրին և անգագը գործունէութիւնն ու ճշմարտափորձիւնը միտքը նոր և ստեղծ յանգուզն ճա նադարհներու մէջ կը մղէին :

Կենաց այս երջանիկ ժամանակին մէջ, մարդոյ հնարիչ կարողութիւնը իւր բովանդակ զօրութիւնը կը ստանայ : Մարդ այս հասակին մէջ շահագիտա կան հաշիւներէ և հատուցեալ հասակի իմաստուն յապաղումներէ լրովն աղատ է : Նա ամեն բանի ձեռնարկելու յանգնութիւնն ունի, վասն զի կը յուսայ ամենայն ինչ իրագործել և բնաւ չը խորհիլի գծաւարութեանց, տարակուսանաց և վըրկանաց վերայ :

Պիւֆան 1753 ին Հալի (2) տեկոյ վիճակագրութեան և օդոյ տարրաբաշխման վերայ գրած աշխատութեան թարգմանութիւնն 'ի լոյս բնծայեց, 1740 ին Նեւտոնի (3) մասհոսան հոլանդ օճը (la methode des fluxions) հրատարակեց, սկիզբը իբր նախաշա իղ անհուն երկրաչափութեան եւ անսահման փոքունց գիւտի վերայ ճառ մը գնեղով : Այս թարգմանութիւնները շատ կարգացուցան, իրենց նախաշա իղներն ամենուն զարմանքը գրաւեցին : Պիւֆան, որ ամենեւին չէր սիրեր այլոց գաղափարաց թարգման հանդիսանալ, մի եւ նոյն ժամանակ բարձրագիւ յիշատակեալ ծանօթութեանց հրատարակութեան կը զրգըր, յորոց երկուքը իրատ Նշանաւոր եղան, մին երկրագործութեան վերայ և միւրը բնագիտութեան :

Արքիմեդէս (4) և Բրոկլիոս (5) հայերէն մը հնա

(1) Պեղնարքիւ լը Պալէ պը Գնդակէն, 1657 ին Ռոստի մը ծնաւ : 1691 ին Ֆրանսիոյ Այնթըփէն և գիտութեանց Այնթըփէն ընդունուեցաւ : 1699 ին գիտութեանց Այնթըփէնի թիւանադպրէր եղաւ : այս պաշտէնը շրջանակ 42 պարէ վարէր, և 1757 ին վարձանեցաւ մէջ 'ի հարկաւորաց հասակն :

(2) Հալի, նշանաւոր Անիլիայի բնագիտ, 1677 Սեդիսթէր 7 ին ծնաւ : և 1761 ին մեռաւ :

(3) Նեւտոն Իսահայ, որ բնական իմաստաբանութեան հասակն է և երկրի արդարաբաժն արարոյ խաբէ մարդկունց մի, դեռ քսան երեք տարեկան լեռնած, արգէն երեք խաբէր գիտեր ըրած էր, այն է մասհոսան հոլանդ օճը, որ իւր հակառակորդը, Լեյբնից, արգէնական (differentiel) հաշիւ իւրեց : Տիւրքիայի ծանրագիտութեան տեւականներ եւ լոսոյ պարագաւորութեանց : Սա 1642 ին ծնաւ, և 1727 ին մեռաւ :

(4) Արքիմեդէս, հուստիւն ամենի մեծ և ամենի նշանաւոր երկրագիտ ու մեխանիկ, 'ի Սիւրիոս ծնաւ 287 պարոյ լաի Բ. Ա. Սիւրիոս գիտութեան և լ. սիւր

րած էին : որ կրնար պարել նիւթերը մեծ հեռաւարութեան հրեհէն : Այս գիւտը, որոյ գաղաւնիքը թաղուն մնացած էր, Պիւֆանի գործնապես ստուգելէն յառաջ բոլորովն առաւարկ մը համարուած էր : Նա մերսոն կրկնեց այս տարրերնալ փորձը՝ 200 օրը հեռաւարութեան հրեհէ մը յառաջ բերելով և սանդիտատեակ ոսպնածն աղաւոյ գաղափարն յղացաւ : որ 1748 ին Ռոչոն արքան մեծ յաջողութեամբ 'ի գործ դրաւ :

Պիւֆան Տիւֆայի բարեկամացաւ, որ դիտող բնապատում մ'էր և բժշկական տեկոյ արքայական պարտիզն տեսուչ : Տիւֆայի, 1659 ին, իւր մեռնելէն յառաջ Պիւֆան իրեն յաջորդ կարգեց :

Պիւֆան 32 տարեկան էր, երբ արքայական պարտիզի տեսուչ անուանեցաւ : Նա այս պաշտօնով իւր բուն կոչման առարկը մոնելով՝ բնութեան երեք թաղաւորութեանց վրայ ընդարձակ հրատարակութեան մը ծրագիրն յղացաւ :

Պիւֆանի արքայական պարտիզը մոնելու թըւականը յիշատակաց արժանի թուական մ'է այս մեծ հաստատութեան պատմութեան մէջ, որոյ հիմնադիրն կրնայ ինքն համարուիլ :

Տոպանտոն (6), որ պարզ բժիշկ մ'էր, Միւղէոմ (7) մտաւ, Պերնարտ տը Ժիւսսիէ, որ անտես մնացած էր նախորդ տեսչէն, յիշուեցաւ : Բոր

տակեան գրիւն ին համարուի, որոյ ին վերաբերի նա ինչէն հայեցաւ գիտել : Տեւարս այն գիտել խաբէութեան դէմ խօսեցաւ : Բայց Պիւֆան ինչ պաշտանեց : Արգէնիւն աշխարհի տեւութի հանձնարեցին մի է : Երբ հոգն մայրիկ Սիւրիոսան պաշտելէն, Մարտիլիոս հրապոյց, որ Արգէնիւնի ինչ ինչայն : Բայց իշտակ ինչ սա իւր խորհրդածութեանց մէջ ընդմիջ, քաղաքի տառաձ լինարաւ և շէնարդի մը հարցանց լը պարտիզներուն պարտաւորաւորաւ Բարիոսիւն ինչ էլաւ 'ի հասակի 75 մայր :

(5) Բրոկլիոս, որ Զր դարաւ Նեոպլոնիոս իմաստաւոր մ'է, 'ի Կ. Պոլիս ծնած, Ալեքսանդրիոյ և Սիւրիոյ մը ուսումնաւոր և քրիստոնեական տեւութեան լինարի եղած է :

(6) Տոպանտոն (լաթինացի-Մարի), նշանաւոր բնապատում մ'է, հայերէնից և Բարիոմ Պիւֆանի, 1716 ին Մոնթպար ծնաւ և 1799 ին 'ի Փարիզ վաճանեցաւ :

(7) Միւղէոմ, ընդարձակ հաստատութեան մ'է, որ ին հաստատի աշխարհի այլ և այլ իղանց ամենապարագիտ բնական արդարաբանութեանց փորձի բնապատման ինչ ինչու, որ արդարան իմ անիւն պարեւ է և ինչու, բաղմանի արդարեւ ինչ բաղման, որ բնութեան երեք թաղաւորութեանց վերաբերեալ ժողովածոյ օգիտար խաբով պարագի էն : մեծ պարեւ մ'է, որոյ մի մասին մը անիւնանիւն և մայրիւն ուսումնաւոր 'ի անիւն, մի այլ մասին մը անիւն մը ինչուանիւն ինչ ինչուանիւն, և մի այլ մասին մը բնապատման լինարան մի և շատերա համար անիւն լինարանի հիմնած էն : Այս հաստատութեան առաջին գաղափարը Լոսի Ժիւսսի թաղաւորի ձեռնարկը բժիշկի յղացաւ և 1626 ին արգէնի հրապարակ մը յետք բերաւ :

դաւ (1)։ Անդուն Բրդի և Արգ—տԱղիր (2) տնկարանական, անգամաղնական և բժշկական աթոռները գրաւեցին։ Պարտեզը, որ անձուկ սահմանի մը մէջ ամբողջուած էր, ընդարձակեցաւ, Ժողովածոյներ կուտակուեցան, նոր սրահներ, ընդարձակ ամբիթեատրոններ հիմնուեցան։

Պիւֆոն այս հաստատութեան ձօն հաւաքածոյքը ընդարձակելու աշխատելով՝ այնչափ ընդարձակ ծրագիր մը յղացաւ, որչափ որ մարդկային հանձարը կրնայ հնարել։

Նա գիտէր, որ իւր աշխատասէր կենաց բոլոր օրերն այս ընդարձակ ձեռնարկութեան պիտի նըւիրուէին, որ անհուն գիւտերու, անսահման յատեւութեան, խորին և սոյոգ գիտութեան և կատարեալ ոճոյ պէտք ունէր։ Բայց Պիւֆոն, ինչպէս իւր քաջարտութեան և տաղանդին, նշնոյէս նաև իւր գործոյն վրայ մտահոլութիւն ունէր։ Նա այն երկշտ հոգիներէն չէր, որ մեծ հանձարները կահաբեկեն և համարձակել չը գիտեն։ Նա հաստատութեամբ մերձեցաւ այս գծուարութիւններով լի գործոյն և շարունակ տասը տարի նիւթերը պատրաստելու, զանոնք յօրինելու, շարակարգութեանց, քննութեանց և ոճոյ (style) արուեստին մէջ հրահանգուելու համար աշխատելով՝ Բնայան պարհուրեւտն առաջին հատորը հրատարակեց և խիստ մեծ եղաւ այս հրատարակութեան յաջողութիւնը։ Եւրոպայ նորա վերայ զարմացաւ և համօրէն ուսմանց մատենակրթք, որ կարծէին թէ առանց ասոյ յենի յիշատակարան մը բարձրացուցած էն, մեր կապարանաց տեսան, որ ժ՛կ դ գարու ամենամեծ գիտնական գործը չէ իրենց աշխատասիրութիւնը։

Մէք այս մեծ գործոյն կազմութիւնը և ծրագիրը միայն յառաջ պիտի բերեմք։

Պիւֆոն երկրի տեսութեանն կրակիս Վստահ և համարձակ ձեռամբ կը գծագրէ հրոյ և ջրոյ աղբջութեամբ յառաջ եկած յեղաշրջութեանց և կերպարանափոխութեանց պատկերը, որք նոյն իսկ այսօր մեր աչաց առջև կը կատարուին, նա երկիրն յուղող յեղափոխութիւնները հանքաց օժանդակութեամբ մեկնելու միջոց մատնանիշ կ'առնէ, և կըհամարձակի մեր մարտակին մինչ 'ի ծագումն բարձրանալ և նորա առաջին կազմակերպութեան վերայ կարծիքներ յայտնել։

անխառնախառն պարբեր ինչ հիշելու համար։ 1759 ին, ինչպէս լեւր պետեմք, Պիւֆոն այս պարբերին պետեւ իւր գոնեցաւ։ 1795 ին Բնայարմոյն լատիգարոնին մարտնադրուն իւր ինչ իշտելով՝ Միւլտէն իշտելուցաւ։

(1) Բուրդաւ, Բէրլին, անգամ գիտութեանց Ախագէտայի, 1742 ին ծնաւ։ և 1832 ին մեռաւ։

(2) Վիլհելմ-Միլլեր (Փելլէս), նպաստար Բէրլին, 1748 ին ծնաւ և 1794 ին մեռաւ, Բէրլինական, Բնայարմոնական, անգամաղնական և գրագիտական մատնադրուն մատնեց։ Իւր աշխատութիւնները, նա մտնաւոր յեղափոխութեան աշխատանք պետարմաց իւր վրայ լաւ իրաւունքով իւր կենսի վրէժնէր։

Երկրէն յետոյ մարդը կը գայ, որ նորա տիրապետն է։ Մինչեւ այն ժամանակ մարդոյն պատմութիւնը թերահատար կերպով միայն ծրագրուած էր։ Պիւֆոն զայն կը գրէ, մարդոյն սրբանէն սկսեալ նորա՝ իւր բոլոր հասակաց մէջ ունեցած բռնական կերպարանափոխութիւնները և բարոյական յառաջադիմութիւնները կը նկարագրէ և անյագ հետաքրքրութեամբ կը ջանայ վերցնել այն քողերը, որք մարդոյ ծննդեան և մահուան գաղտնիքը կը պարսաւած կեն։

Ինչ աղին գաղտնիքներով կը յուղէ նա այս ամեն ինչիները, ինչ անկեղծութեամբ 'ի հանգէս կածէ մարդոյ կարճատեւ կենաց հանգամանքները և ինչ ներդաշնակ ու սրտառու ռճով կը նըկարագրէ նորա ամենաքաղցր զգացումները, ամենաբուռն ուրախութիւնները և ամենադառն վիշտերը։

Պիւֆոն մարդոյ պատմութեանն զինի կենդանեաց պատմութիւնը կը գրէ, այն է շորթոտանեաց և թռչնոց։ Նա 400 տեսակէն աւելի կենդանեաց ոչ թէ միայն արտաքին կերպարանքը և անգամաղնական մանրամասնութիւնները կ'առույցանէ, այլ և նոցա իւրաքանչիւրն բարբը, բնազդումները և սովորութիւնները։

Այս գիտնական նկարագրութեանց նուիրուած գեղեցիկ էջերն՝ կենաց շարժման քաղցր և ճըշգրիտ պատկերը կը ներկայացնեն, մէն մի էակի ներդաշնակութիւնը և այն ամեն զոյալութեանց բանաստեղծութիւնը, որք յախտնական զօրութեան մը հրաշալիքները կը պատմեն։

Պիւֆոն 'ի սկզբան կարծէր թէ պիտի կարողանայ այս մեծ գործն յաւելի հանել, բայց թըռչնոց ուսումն հազիւ վերջացած էր, երբ ծերութիւնը վրայ հասաւ։ Ժամանակը կը պահէր, իւր աշխատութեան շղթայն պիտի խորտակուէր, պէտք էր կոմ իւր աշխատութիւնը յանկարծ ընդհատել։ Կոմ կերպիւ մը զայն ամբողջացներ։

Պիւֆոն վերջին խորհուրդը նախամեծար համարելով՝ հանքաց պատմութիւնը գրեց, որ երկրի տեսութեանց հետ միանալով բոլանդակ գործը ամբողջացուցին։

Այս տեսակ աշխատութիւն մը յօրինելու համար ոչ միայն տաղանդ հարկաւոր էր, այլ և մեծ նախապահական հանդարտութիւն, որ ճշմարիտ նըւիրութեանց աղբիւրն է։ Պիւֆոն այս հանդարտութիւնը իւրաքանչիւր տարի իւր Մոնդպարի պարտեղաց մէջ կը գտներ։

« Ի Մոնդպար, զարգարուն պարտիղի մը մէջ, կըսէ Վիլհելմ-Միլլեր, հնամի աշտարակ մի կը բարձրանայ, ահա անգամնօր գրեց Պիւֆոն իւր բնական պատմութիւնը, անտի տարածուեցաւ իւր համբաւն ընդ ամենայն տիեզերս։ Նա անդ կ'երթար 'ի ծագիլ արեւու և անձանձիւ կ'աշխատէր։ Առաւօտեան հանդարտութիւնը, թռչնոց առաջին երգերը, զաշտաց աղբի աղբի տեսլը, վերջապէս նորա զգայարանաց աղբիւր ամեն բան՝ զայն գէպ

'ի իւր գաղափարը կը դարձնէին : Ազատ , անկախ , մերթ զմերթ յերկինս , ներշնչութեան շարժման մէջ և իւր մտածութեանն գոհ՝ ծառուղեաց մէջ կը յաճէր : մերթ իւր ընթացքը կը փութացնէր : մերթ կը մեղմացնէր , մերթ զկայ կ'աւելոր եւ մերթ կ'ամփոփուէր : որոնելով , չգտնելով , կամ գտնելով արտագրել կը փութար , կը գրէր , կը ջնջէր , 'ի նորայ կը գրէր՝ վերտփն ջնջելու համար : Ճառին բոլոր մասերը՝ միեւնոյն խնամով , մի և նոյն ճաշակով և մի և նոյն արուեստով հաւաքելով , յարգարեւով բազմոյց կ'արտասանէր՝ ամեն անգամ արագրելով և վերջապէս իւր ճիգերէն գոհ 'ի նորայ առանձինն առողջաբանութեամբ կը կարգար զայն , 'ի զուարճութիւն և իբր 'ի փոխարինութիւն իւր այնչափ վատակոյց : Իր ասացուածքը իբր ոտանաւոր այնչափ անդամ կը կրկնէր , որ իւր յիշողութեան մէջ կը դրոշմուէին , իւր բարեկամաց աւջեւ կ'արտասանէր զայն եւ կըստիպէր զանոնք , որ ինքնին բարձրաձայն կարգան զայն իւր ներկայութեամբ , ինքն անաչառ դատողութեամբ սենկնդիր կը լինէր և անդու նորայ վերայ կաշխատէր , կամելով 'ի կատարելութիւն բարձրանալ , ուր անհամբեր դրողէտ մի երբէք չէ կարող ժամանել ր :

Ամեն անոնք , որ Մոնդպարի փառաւոր պարտիզին թաւաստուէր ծառուղեաց և նորա անկարելի գրից այցելած են , սոյն պերճարան անցից ստորագրութեան մէջ աւելի խանդ ու հրապոյր պիտի գըտնեն :

(Շարունակելէ :)



ԱՐԴԱՐ ԲՈՂՈՔ ԱՆԻՐԱԻ ՀԱՐՈՒՄԾԻ ՄԸ ԴԵՄ

« Եթէ չար ինչ խօսեցայ ,
վկայեա՛ վրան չարին , ապա
թէ ոչ ընդէր հարկանես ր :

Մեր նախորդ յօդուածէն արդէն տեսնուեցաւ թէ 'ի ներկայութեան Հրէից քահանայապետի և համորէն օրինական դատուց՝ տեսնուած դատին մէջ քանի՞ օրինաւորութիւն և իրաւիկ արդարութիւն կը թաղաւորէր , տեսնուեցաւ թէ՛ Աստուծոյ քահանայք ,

արդութեան սպասաւորք , արդարութեան պաշտօնեայք եւ օրինաց գործադիրք ինչ ոգով և ինչ զգացմամբ նոյն դատաւորական ատենը խմբուած նենգաւոր խորհուրդներ կ'երկնէին և սարսնութեան հնարներ կ'որոնէին անարատ և անբասիր Աստուծորդւոյն դէմ . տեսնուեցաւ թէ՛ մեծ քահանայապետն , Մովսիսի փոխանորդըն , Աստուծոյ պատգամաւորն և արդարութեան ու օրինաց գործադիր գերագոյն պաշտօնեայն ինչպէս կը դատէ արդար ամբաստանեալ մը եւ նորա հաւատարիմ արբանեակն ինչ յանդուգն վարմունք կ'ունենայ Յիսուսի անմեղ , վստահ և համարձակ պատասխանատուութեան դէմ հակառակ օրինաց և արդարութեան ապտակելով զնա մի այնպիսի պարագայի մէջ , ուր մահու և կենաց խնդիր կը յուզուի . և ուր մարդն պէտք է լռէ և միայն օրէնքը խօսի և գործէ : Այս ամենն նենգութեանց , այս ամենն դաւաճանութեանց , այս ամենն մեքենայութեանց , անիրաւութեանց և բարբարոսական բռնութեանց դէմ , տեսնուեցաւ նաև Աստուծորդւոյն Յիսուսի ցոյց տուած անխռով , հեղահոգի և համարձակ ընթացքը , որ հաւատարիմ իւր խաղախրական վարդապետութեան՝ մարտիրոսական համբերութեամբ կը տանի ամեն զրկանաց քանի որ ուղղակի իւր անձին դէմ են , և կ'աշխատի բարութեամբ յաղթել չարութեան ոգւոյն , և քաղցրութեամբ ամփոքել դաւնութեան պտուղը : Այս քաղցրութիւնը և այս հեղահոգի խոնարհական ընթացքը փոխանակ մեղմելու հրէական կատաղի կրից թափը , փոխանակ արթնցնելու նոցա թմրած խիղճը և խղճահարելու գիրենք իրենց անարդար արարմանց վերայ , ընդհակառակն կը տեսնուի որ աւելի ճարակ